ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վեդի *25 հոկտեմբերի 2024թ.*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2024 թվականի հոկտեմբերի 25-ին, ժամը 15:00-ին Վեդու համայնքապետարանի նիստերի դահլիճում (ք. Վեդի, Թումանյան 6), տեղի ունեցավ ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի 2025 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ հանրային լսումներ:

Հանրային լսմանը մասնակցում էին Վեդի համայնքի համայնքային ենթակայության կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև համայնքի բնակիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ:

Հրավիրված հանրային լսումները վարում էր Վեդի համայնքի ղեկավար Գարիկ Սարգսյանը

Հանրային լսումների ընթացքն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Հ.Ստեփանյանը

1.Հանրային լսման օրակարգի թեման էր՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Համայնքի ղեկավարի կողմից առաջարկված Վեդի համայնքի 2025 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ ելույթով հանդես եկավ Վեդի համայնքի ղեկավար Գարիկ Սարգսյանը, ով ողջունելով հանրային լսման մասնակիցներին առանձնահատուկ կարևորեց հանրային լսումների միջոցով համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը ապահովելու անհրաժեշտությունը և նշեց, որ ելնելով այն հանգամանքից, որ համայնքը սոցիալ-տնտեսական առումով համաչափորեն զարգացած չի, ուստի սահմանվել է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով նախատեսված գոտիավորում:

2025 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հիմնականում

մնացել են անփոփոխ՝ միաժամանակ հաշվի են առնվել «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի՝ 2021-2024 թվականներին կատարված փոփոխությունները:

Հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի և 12-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները, ինչպես նախորդ տարի, այնպես էլ 2025 թվականի համար, տեղական տուրքերի սահմանված դրույքաչափերը գյուղական բնակավայրերում հիմնականում հաշվարկվել են 0.5 գործակցով, բացառությամբ սահմանամերձ և լեռնային բնակավայրերի, որոնց համար կիրառվել է նաև 0.3 գործակից, իսկ Վեդի քաղաքային բնակավայրի համար որոշ տեղական տուրքերի դրույքաչափերի համար սահմանվել են 1-ից մինչև 3 գործակիցներ:

Պարոն Սարգսյանը նշեց, որ «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքում 2025 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին» համայնքի ավագանու որոշման նախագիծը ընդունելու արդյունքում ակնկալվում է ապահովել համայնքի բյուջեի եկամուտների այն մասը, որը ձևավորվում է տեղական ինքնակառավարման մարմնի սեփական լիազորությունների շրջանակներում համայնքի կամ համայնքի պատվերով մատուցած ծառայությունների և սեփական լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ օրենքով սահմանված գործողությունների համար համայնքի բյուջե վճարվող պարտադիր գանձույթներից:

Քանի որ տեղական տուրքը տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ օրենքով սահմանված գործողությունների համար համայնքի բյուջե վճարվող՝ օրենքի դրույթների հիման վրա ավագանու սահմանած պարտադիր գանձույթ է, իսկ տեղական վճարը՝ տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների շրջանակներում համայնքի կամ համայնքի պատվերով մատուցած ծառայությունների համար համայնքի բյուջե վճարվող՝ օրենքի դրույթների հիման վրա ավագանու սահմանած պարտադիր գանձույթ է և ուղղված է կարգավորելու տեղական տուրքերի և վճարների սահմանման ու գանձման հետ կապված հարաբերությունները:

Այնուհետև նշվեց, որ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի համաձայն՝ համայնքի բյուջեի ձևավորման աղբյուր են հանդիսանում նաև տեղական տուրքերը և վճարները: Նշված դրույթը ամրագրված է նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում:

Հետևաբար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին ավագանու որոշման նախագծի ընդունումն ուղղված է համայնքի բյուջեի եկամտային մասի ապահովմանը:

Համայնքի ղեկավարը հանրային լսման օրակարգը ներկայացնելուց հետո խոսքը փոխանցեց աշխատակազմի քարտուղար Հ.Ստեփանյանին, ով ներկայացրեց հանրային լսման վերաբերյալ հրապարակային ծանուցման ընթացքը, նշելով, որ հանրային լսման վերաբերյալ հայտարարությունը Վեդի համայնքի ավագանու 29.06.2024 թվականի N 69-Ա որոշմամբ սահմանված կարգով 15 օր առաջ նախապես հրապարակվել է Վեդու համայնքապետարանի պաշտոնական՝ www.vedicity.am կայքում, սահմանված կարգով հանրային լսման վերաբերյալ հայտարարությունը առաքվել է համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղեկավարներին՝ տեղերում բնակչության շրջանում համապատասխան իրազեկում ապահովելու համար: Հայտնեց, որ հանրային քննարկումների ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձինք հնարավորություն են ունեցել հանրային քննարկման առարկայի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնել մինչև 2024 թվականի հոկտեմբերի

23-ը, վերջիններս ուղարկելով հանրային ծանուցման մեջ նշված էլ.հասցեով, ինչպես կարող էին ներկայացնել համայնքապետարանի աշխատակազմ նույն ժամկետում, սակայն նշված ժամկետում շահագրգիռ հանրության կողմից համապատասխան դիտողություններ և առաջարկություններ չեն ներկայացվել:

Աշխատակազմի քարտուղար Հ.Ստեփանյանը նշեց, որ օրակարգում ընդգրկված հանրային լսման վերաբերյալ Վեդի համայնքի ավագանու որոշման նախագիծը կազմված է 2 հավելվածից, որից Հավելված 1-ը՝ Վեդի համայնքում տեղական տուքրերի տեսակներն ու դրույքաչափերն են 2025 թվականի համար, իսկ Հավելված 2-ը՝ Վեդի համայնքում տեղական վճարների տեսակներն ու դրույքաչափերն են:

Այնուհետև, խոսքը փոխանցեց համայնքի ղեկավարի տեղակալ Բ.Շահինյանին, ով ներկայացրեց քաղաքաշինության ոլորտում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը և տեսակները, նշեց, որ որոշակի փոփոխություններ են կատարվել շինարարության թույլտվությունների, հողամասերի գործառնական նշանակության փոփոխությունների ոլորտում գործող տեղական վճարների մեջ, հաշվի առնելով հողամասերի գտնվելու վայրի գոտիականությունը և բնակավայրի հեռավորությունը համայնքի կենտրոնից:
Առևտրի և ծառայությունների ոլորտում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը և տեսակները ներկայացրեց աշխատակազմի Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Մ.Ղազարյանը, ով հայտնեց, որ փոփոխություններ հիմնականում կատարվել են ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի մասով, որոնք արտացոլված են տեղական տուրքերի և վճարների վերաբերյալ ներկայացված հավելվածներում: Նշեց, որ փոփոխությունները պայմանավորված են վաճառքի ծավալների փոփոխությամբ և վաճառվող ապրանքների տեսակներով:

Ամփոփելով հանրային լսումը, համայնքի ղեկավարը շնորհակալություն հայտնեց հանրային լսման մասնակիցներին և հորդորեց այսուհետ ակտիվ մասնակցություն ցուցաբերել նման հանրային միջոցառումների մասնակցությանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

Արձանագրող՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ՀՐԱՉՅԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

Հավելված 1

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Համայնքի ղեկավարի կողմից հանրային քննարկման դրված իրավական ակտի կամ համայնքային հարցի նախագծի վերաբերյալ ֆիզիկական և իրավաբանական անձանցից ստացված առարկությունների և առաջարկությունների

Հ/հ	Առարկության և (կամ) առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը և համարը	Առարկության և (կամ) առաջարկության ամփոփ բովանդակությունը	Առարկության և (կամ) առաջարկության վերաբերյալ համայնքի ղեկավարի եզրակացությունը	Նախագծում կատարված փոփոխությունը և (կամ) լրացումը
	1	2	3	4
1.	-	-	-	-
2.	-	-	-	-
3.	-	-	-	-
4.	...			
5.	...			

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված 2

ՏԵՂԵԿԱՆՔ

ՏԻՄ-երի իրավական ակտի կամ համայնքային հարցի նախագծի վերաբերյալ հանրային քննարկումների մասին

Հ/հ	Տեղեկատվության բնույթը	Տեղեկատվության բովանդակությունը
1.	Տեղեկանքի վերնագիրը	ՏԵՂԵԿԱՆՔ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ
2.	Հանրությանը իրավական ակտի կամ համայնքային հարցի նախագծի վերաբերյալ իրազեկումը	Հանրային քննարկման վերաբերյալ համապատասխան ծանուցումը տեղադրվել է համայնքի պաշտոնական համացանցային կայքում՝ www.vedicity.am, 10.10.2024 թվականին:
3.	Հանրային քննարկումների մասնակիցները	Հանրային քննարկումը վարում էր համայնքի ղեկավար Գ. Սարգսյանը, իսկ հանրային լսման ընթացքն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Հ.Ստեփանյանը: Հանրային լսմանը մասնակցում էին Վեդի համայնքի համայնքային ենթակայության կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև համայնքի բնակիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ՝ համաձայն հանրային լսման վերաբերյալ կազմված արձանագրությանը կցված հանրային լսմանը մասնակցած մասնակիցների ցուցակի:
4.	Հանրային քննարկումներին մասնակցության արդյունքները	Հանրային քննարկման ընթացքում զեկուցողների կողմից ներկայացվեց քննարկմանը դրված «**Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքում 2025 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին**» համայնքի ավագանու որոշման նախագիծը և վերջինիս անբաժանելի մասը կազմող Հավելված 1՝ տեղական տուրքերիտեսակներն ու դրուքաչափերը, Հավելված 2՝ տեղական վճարների տեսակներն ու դրույքաչափերը: Հանրային լսման մասնակիցներին տեղեկացվեց, որ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերում հիմնականում կատարվել են որոշակի փոփոխություններ, որոնք պայմանավորված են ինչպես օրենսդրական փոփոխություններով, այնպես էլ դրույքաչափերը սահմանելիս հաշվի են առնվել հողամասերի դեպքում՝ հողամասերի գտնվելու վայրի գոտիականությունը և բնակավայրի հեռավորությունը համայնքի

		կենտրոնից, իսկ առևտրի և ծառայությունների դեպքում՝ վաճառքի ծավալների փոփոխությունները և վաճառվող ապրանքների տեսակները: Հանրային քննարկումներն անցկացվեցին հարց ու պատասխանի ձևաչափով, որտեղ մասնակիցների կողմից բարձացված հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ: Հանրային քննարկման դրված հարցի վերաբերյալ ներկայացված առաջարկություններն ու դիտողություններն արձանագրվեցին հանրային լսման վերաբերյալ կազմվող արձանագրությունում՝ առաջիկա ավագանու նիստին համայնքի ավագանու քննարկմանը ներկայացնելու համար:
5.	Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)	-

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Հ.ՍՏԵՓԱՆՅԱՆ**